

**ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք**

**ԵՒ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ**

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Թ. 1066

Յունիսար 1967

Ս. ԵՀՄԻԱԽԵՆ

Ամենապատիւ

S. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրուեանին,  
Պատրիարքին Հայոց Երուսաղէմի,

Երուսաղէմ.

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Փրկչի Խջման Սուրբ Տաճարէն, Նոր Տարուայ սեմին, քաղցր է Մեզի համար Զեզի աւետել Սուրբ Ծննդը եւ Աստուածայայտնութիւնը Տեսոն մեր Յիսուսի Քրիստոսի, աղօրելով որ Բարձրեալն Աստուած իր օրինութիւնը եւ խաղաղութիւնը տարածէ մեր օրերու աշխարհին վրայ. ի փրկութիւն եւ յերջանկութիւն համայն մարդկութեան:

Այսօր, մարդկի եւ ժողովուրդներ, բոլոր անխութիր, սուրբ սպասումներով եւ յոյսերով լի, իրենց հոգիները կը բանան երեշտակներու անուշ երգին, պապատագին հայցերով որ աշխարհի վրայ ըլլայ՝ աւելի խաղաղութիւն եւ մարդոց միջև աւելի հանութիւն:

Սուրբ Ծննդեան աւետիսով կ'ողջունենք զՁեզ սիրելի Սրբազնի Եղայր, մադրելով Զերդ Ամենապատուութեան արեւատութիւն եւ երկնային օգնուանութիւն ի խնդիր Զեր եկեղեցաշէն ու ազգանուեր զործոց յաջողութեան:

Մեր Հայրական ողջոյնը եւ օրինութիւնը նաև Զեր Տիրախնամ Սուրբ Արռոի անձնուեր եւ բարեցան միաբանութեան եւ համայն մեր հաւատացեալ ժողովուրդին, խաղաղ ու արդիւնաշատ աշխատանքի մադրանքներով հանդերձ, որ անոնք բոլորը անխութիր, միաշունչ եւ միակամ, աշխատին խաղաղ ու համբաւաշխ, մեր Սուրբ Եկեղեցին ծաղկութիւն եւ մեր սպանդուխտ ազգին ապահով ու միասնական պահպանման համար :

Նորիք, սէր եւ խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի հղիցին ընդ Զեզ այժմ եւ յախտեան: Ամէն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս:

ՎԱԶԳԵՆ Ա.

ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ  
ՄԵԾԻ ՏԱՆՆԿԻԼԻՑ

ԱՆՁԻՆԱՅԻՆ — ՀԱՅԱՀԱՅԻ

Ամբիլիան, 20 Դեկտեմբեր 1966

**Ամենապատիւ**

S. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս

Քարեխնամ Պատրիարք Հայոց Երուսաղեմի

Երուսաղեմ

Ամեն. եւ Սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Նոր Տարուան եւ Փրկչի Ս. Նննդեան հրաշալի սօնին առքիւ Զերդ Ա-  
մենապատուութեան կը ներկայացնենք Մեր սրտալից եւ չերմ շնորհաւորու-  
թիւններն ու լաւագոյն մաղրանենք:

Ի խորց սրտի կ'աղօքեն, որ Բարձրեալն Աստուած պարզեւէ Զեզի  
Քաջառողջ եւ երջանկալից երկար կեանք եւ լիակատար յաջողութեամբ պր-  
սակէ եկեղեցանուէք Զեր բոլոր նիգերն ու ջանենք:

Կը մաղրենք որ Բերդեհեմի Մանուկը, Տէր Յիսուս Քրիստոս, Խաղա-  
ղութիւն շնորհէ համայն մարդկութեան եւ արդարութիւն հաստատէ այս  
Երկրի վրայ:

Մեր սրտի խորագոյն աղօքեն է, որ Բերդեհեմի Երկնակամարին վրայ  
յայտնուած պայծառափայլ աստղին լոյսովը առաջնորդուի մեր ժողովուր-  
դին կեանք յառաջիկայ տարուան ընթացքին՝ Եղբայրական սիրոյ, փախա-  
ղարձ հասկացողութեան. միասնական ողիի եւ համերաշխ գործակցութեան  
ուուրք համբաներով:

Թող անշարժ եւ անսասան մնայ Հայց. Ս. Եկեղեցին եւ բարգաւան ու  
ծաղկեալ կեանք ունենայ հաւատացեալ Հայ ժողովուրդը Մայր Հայրենիքին  
մէջ եւ ի Սփիռոս աշխարհի:

Մնամ Եղբայրական սիրոյ չերմ ողջունիւ.

Աղօքարար

ԽՈՐԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆԿԻԼԻՑ

Լամպէրի Պալատ,

Լոնսոն

Ս. Նոնոնդ, 1966.

Զերդ Ամենապատութիւն,

Սիրեցեալ եղբայր ի Քրիստո,

«Ծնորիք եւ խաղաղութիւն ի Հօրմէ մերմէ  
եւ ի Ցիսոնէ Ցիսուէ Քրիստոս»:

Կը մօտենայ Սուրբ Մնունի հրանուալի եղանակը, երբ ամբողջ աշխարհի մէջ զանուող քրիստոնեաներ կը միանան՝ շնորհակալ ըլլալու Աստուծմէ իրենց Տէր եւ Փրկիչ Ցիսու Քրիստոսի Մարդեղութեան համար:

«Եւ Բանն մարմին եղեւ՝ եւ բնակեաց ի մեզ, եւ  
տեսաք զիսոս նորա՝ զիսոս իրեւ զՄիածնի առ  
ի Հօրէ, լի շնորիօք եւ նշմարտութեամբ» (Յովհ. Ա. 14):

Խոր երախտագիտութեամբ կը վերյիշենիք թէ ինչպէ՞ս Ամենակալն Աստուծ, որ այսին հրաշալիօրէն եր պատկերին համաձայն ստեղծեց մարդը, զայն աւելի սբանչելի կերպով փրկեց: Յաւիտենական Որդին Աստուծոյ իջնելով մեր մէջ, բաժին առաւ մեր մարդկային բնութենէն, այլ ապրեցաւ առանց մեղդի: Մեզի նմանեցաւ, որպէսզի եր միջոցաւ կարենայինիք բաժնեկից ըլլալ երկնային բնութեան:

«Քանզի զիտէք զշնորհսն տեսան մերոյ Ցիսուսի Քրիստոսի.  
զի վասն Ճեր աղքատացաւ՝ որ մեծասունն էր, զի դուք  
Նորա աղքատութեամբն մեծացիք» (Բ. Կորնը. Ը. 9):

Այս ուրախութիւն տօնին, հետեւաքար, կ'ողջունենիք Զեզ յանուն Մարդացեալ Քրիստոսի: Կը վստահեցնենիք թէ կ'աղօրենիք շարունակարար Աստուծոյ բոլոր սուրբ եկեղեցիներուն բարօրութեան համար, եւ մասնաւորապէս կ'աղօրենիք որ Աստուծ օրինէ Զերդ Ամենապատութիւնն ու Զեր հոգածութեան տակ զանուող կրօնականները եւ հաւատացեալ ժաղավորդը:

Եղբայրական սիրով եւ ողջունիւ,

Զեր Եղբայրը ի Քրիստոս՝

Միքաջէլ,

Արքեալիսկոպոս Գէնքըրապրիի  
եւ Առաջնորդ Համայն Անգլիոյ

22 Գեկտեմբեր 1966

**Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս**

Պատրիարք Հայոց Երուսաղէմի  
Երուսաղէմ

**Ամենապատիւ Մրգան Հայր,**

Մոռալուտ Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի ուրախ առիթներով, մեր,  
Տիկին Մանուկեանի եւ Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչութեան անդամնե-  
րուն կողմէ. Զեզի կը յայտնիք մեր սրտագին շնորհաւորութիւններն ու  
որդիական մադրանեները՝ Զերդ Արքազնութեան արեւատութեան եւ Ս. Յա-  
կորայ Միաբանութեան բարօրութեան համար:

Ի սրտէ կը մադրենիք որ 1967 տարին խաղաղութեան եւ արդինաշաս  
զործունեութեան շրջան մը ըլլայ Ս. Արքուիդ համար. որպէսզի կարենան  
գլուխ հանել Զեր աստուածահանոյ գործերն ու շինարարական ծրագիրները  
որոնց բարունք բնիքացքին մօտէն կը հետեւինք այս հեռաւորութենէն:

Նոր տարուան սեմին վրայ, Զերդ Ամենապատութեան կը մադրենիք  
ֆաջուողջ եւ երկար կեանիք, ինչպէս նաև ամէն յաջողութիւն՝ Զեր շինարա-  
ր կան, կը բական եւ երատարակչական գործերուն:

**Լաւագոյն զգացումներով  
եւ**

համբուրի Զեր Ս. Աքոյն

**Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ**

Նախագահ